ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՓԱՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Արմավիրի մարզ, Գ. Փարաքար, Նաիրի 42, Հեռ. 0231 6-00-42, 060-53-00-42

N 2478
09 նոյեմբեր 2022թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Հովհաննիսյան,

2022 թվականի դեկտմբերի 9-ին ժամը 12:00-ին ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի շենքում նախատեսվում է կազմակերպել ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի գ. Մերձավան, Երկրագործների փողոց 9 հասցեում գտնվող՝ 04-065-0075-0003-001 կադաստրային ծածկագրով 63.2 քմ մակերեսով տնտեսական շինություն, 04-065-0075-0003-002 կադաստրային ծածկագրով 70.2 քմ մակերեսով ծածկ և սպասարկման համար անհրաժեշտ՝ 04-065-0075-0003 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.3027 հա մակերեսով հողամասի աճուրդի իրականացման գործընթացը:

Այսպիսով խնդրում ենք Ձեր միջնորդությունը սույն գրությանը կից ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքում համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի դասական աճուրդի վերաբերյալ հայտարարությունը ՀՀ Արմավիրի մարզպետարանի պաշտոնական կայքէջում 09/11/2022 թվականից տեղադրելու համար:

ՀԱՐԳԱՆՔՆԵՐՈՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

Կատարող՝ իրավ. բաժնի առաջատար մասնագետ
Արփինե Ավագյան
077 352570

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանը հայտարարում է համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի դասական աճուրդ:

ԼՈՏ 1 - ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի գ. Մերձավան, Երկրագործների փողոց 9 հասցեում գտնվող՝ 04-065-0075-0003-001 կադաստրային ծածկագրով 63.2 քմ մակերեսով տնտեսական շինություն, 04-065-0075-0003-002 կադաստրային ծածկագրով 70.2 քմ մակերեսով ծածկ և սպասարկման համար անհրաժեշտ՝ 04-065-0075-0003 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.3027 հա մակերեսով հողամաս /այսուհետ՝ Գույք/: Աճուրդի ծածկագիրն է՝ ԳԱ-01-22:

Աճուրդի մեկնարկային գին է սահմանվում 16.090.118 /տասնվեց միլիոն իննսուն հազար մեկ հարյուր տասնութ/ ՀՀ դրամ, որից 2.646.000 /երկու միլիոն վեց հարյուր քառասունվեց հազար/ ՀՀ դրամ՝ շինության համար, 13.444.118 /տասներեք միլիոն չորս հարյուր քառասունչորս հազար մեկ հարյուր տասնութ/ ՀՀ դրամ՝ հողամասի:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ՝ այցելելով ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարան, հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ Փարաքար համայնք, գ.Փարաքար, Նաիրի 42:

Աճուրդին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիներն ու իրավաբանական անձինք:

Աճուրդի նախավճարի չափը կազմում է աճուրդի առարկայի մեկնարկային գնի 50 տոկոսը, քայլի չափը՝ մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

Աճուրդում հաղթող կճանաչվի առավելագույն գին առաջարկողը:

Աճուրդի պայմանների մանրամասներին ծանոթանալու և հայտ ներկայացնելու համար դիմել ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարան /ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գ. Փարաքար, Նաիրի 42, 1-ին հարկ, քաղաքաշինության և հողաշինության բաժին/:

Աճուրդը կայանալու է 2022 թվականի դեկտմբերի 9-ին ժամը 12:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի շենքում: Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2022 թվականի դեկտեմբերի 6-ը, ժամը 18:00-ն:

Հեռ.՝ 023-16-00-42:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**